



ԱՅՅԵԼՈՒԹԻՒՆ ՌԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻՆ ԵՒ ԽԱՉՔԱՐԻ ՕՐՀՆՈՒԹԻՒՆ



Ուրբաթ 28 Ապրիլին Թեմակալ Առաջնորդ Գերշ. Տ. Վահան Եպս. Յովհաննէսեան այցելութիւն մը տուաւ Ռենի հայկական համայնքին, ընկերակցութեամբ Իսի Լէ Մուլիոնի հոգեւոր հովիւ Տ. Աւետիս Ա. Քինց. Պալլագեանի, եւ Իսի Լէ Մուլիոնի Ծխական Խորհուրդի ատենապետ Պրն. Հայկազ Կեօրտեպաք-Տրդատեանի : Ինքնաշարժով չորս ժամուան ճամբորդութենէ ետք Առաջնորդ Սրբազանը եւ իր ընկերակիցները ընդունուեցան Պրեթանի Հայկական Ընկերակցութեան նախագահի եւ փոխ նախագահի կողմէ: Այցելութիւնը երկու նպատակ ունէր. 1915-ի Հայոց Ցեղասպանութեան մէկ ու կէս միլիոն զոհերու յիշատակին նոր քանդակուած խաչքարի օրհնութիւնը եւ բացումը, եւ երկրորդ՝ հանդիպիլ համայնքի պատասխանատուներուն հետ քննարկելու համար Ռենի մէջ Հայ Եկեղեցոյ ծխական կառոյցի ստեղծման կարելիութիւնները: Խաչքարի օրհնութեան արարողութիւնը սկսաւ ժամը 15:00-ին, ներկայութեամբ Ռենի արքեպիսկոպոսի օգնականի, Հայաստանի դեսպան Պրն. Վիգէն Զիտէնանի եւ հաւատացեալներու բազմութեան մը: Իր խօսքին մէջ Վահան Եպիսկոպոս շնորհատրեց համայնքն ու ընկերակցութիւնը եւ ըսաւ. «Այս գեղեցիկ պարտէզին մէջ փոքրիկ Հայաստան մը ստեղծեցիք կանգնեցնելով աստուական այս խաչքարը»: Ան քաջալերեց յաջորդ կարեւոր քայլը անել՝ ստեղծել Ֆրանսայի Թեմէն ներս նոր ծովս մը: «Հայ Եկեղեցին միշտ եղած է եւ միշտ պիտի ըլլայ հայկական համայնքի ողնայարը սփիւռքի մէջ»: Յաջորդեց ընդունելութիւն մը, ուր Սրբազան Հայրը հանդիպեցաւ համայնքի պատասխանատուներու եւ գործոս անձնատրութիւններու հետ, որոնցմէ ունանց արդէն հանդիպած էր իրեն ի պատիւ տրուած ճաշկերոյթին նախքան խաչքարի օրհնութիւնը: Ներկաները վստահեցուցին որ համայնքը կարողութիւն ունի ծխական կառոյց ստեղծելու: Անհրաժեշտ է միացնել ճիգերը եւ նիւթական աղբիւրներ հայթայթել, որու համար Սրբազան Հայրը խոստացաւ իր կարելին ընել:

ԹԵՄԸ ՈԳԵԿՈՉԵՑ ՅԵՂԱՍՊԱՆՈՒԹԻՒՆԸ




Ինչպէս ամէն տարի աւանդութիւն դարձած է, Երկուշաբթի 24 Ապրիլի ժամը 15-ին սուրբ պատարագ մատուցուեցաւ ի յիշատակ մեր 1,5 միլիոն նահատակներուն եւ հազարաւոր վիրաւորներուն, որբերուն, անտուններուն, իրենց պապենական հողերէն արմատախիլ եղած, եկեղեցիներէն, դպրոցներէն եւ զիրենք պաշտպանող կազմակերպութիւններէն զրկուած հազարաւոր հայերուն: Եկեղեցին լեցուն էր մինչեւ փողոց: Թեմակալ Առաջնորդ Գերշ. Տ. Վահան Եպս. Յովհաննէսեան մատուցեց սուրբ պատարագը, օգնական ունենալով Մայր Եկեղեցոյ տեսուչ Տ. Յուսիկ Քինց. Սարգսեանը: Իր քարոզին մէջ սրբազանը կեղդոնացաւ նահատակներու գերագոյն զոհողութեան վրայ, լուսարձակի տակ բերելով անոնց վճարած գինը ի խնդիր մեր ազգի գոյատեւման: «Այս աշխարհի մեծ ուժերը պիտի ճանչնան Ցեղասպանութիւնը, որովհետեւ ատիկա իրականութիւն է: Բայց մենք տակաւին շատ գործ ունինք այդ ուղղութեամբ: Մենք պէտք է զօրացնենք մեր համայնքները ուր որ ալ գտնուինք: Պէտք է թիկունք կանգնինք մեր եկեղեցիներուն, որպէսզի մեր գաւաակները ժառանգեն մեր հաւատքը գոր թուրքերը ուզեցին խլել մեզմէ: Պէտք է դպրոցներ կառուցենք որպէսզի իւրաքանչիւր հայ առիթը ունենայ սորվելու մեր պապերուն եւ մեր մէկ ու կէս միլիոն սուրբ նահատակներուն լեզուն: Քաղաքակրթութեան մը մէջ ուր երկու հոգի կրնան ընկերակցութիւն մը հիմնել, մենք պէտք է միացեալ ճիգերով աշխատինք իրականացնել մեր նպատակները որպէս ազգ որ յարութիւն առած է 20-րդ դարու առաջին Ցեղասպանութենէն», ըսաւ Սրբազանը: Պատարագի աւարտին խորանին վրայ մեր սրբապատուած նահատակներու բարեխօսութեան յատուկ արարողութիւն կատարուեցաւ, մասնակցութեամբ քոյր եկեղեցիներու հիւր հոգեւորականներու:

ԱՌԱՋԻՆ ԵՊԻՍԿՈՊՈՍԱԿԱՆ ՊԱՏԱՐԱԳ ՊԵԼՃԻՔԱՅԻ ԼԻԷԺ ՔԱՂԱՔԻՆ ՄԷՋ



Կիրակի 30 Ապրիլին Թեմակալ Առաջնորդ եւ Արեւմտեան Եւրոպայի Հայրապետական Պատուիրակ Գերշ. Տ. Վահան Եպս. Յովհաննէսեան այցելութիւն մը տուաւ Պելճիքայի Լիւթ քաղաքի հայկական համայնքին: Սրբազան Հօր կրկնակցեցին Հայրապետական Պատուիրակի Պելճիքայի Փոխանորդ Տ. Զատիկ Վրդ. Աւետիքեան, խորանի ծառայողներ, երգչախումբի անդամներ եւ ուխտատուներ: Պատարագը տեղի ունեցաւ կաթոլիկ եկեղեցոյ մը մէջ, որ տրամադրուած էր հայկական համայնքին: Խօսելով յարութեան հրաշքի մասին, Վահան Եպիսկոպոս հաւատացեալները հրաւիրեց խորհելու կիներու վճռակամութեան մասին, որոնք Յիսուս Քրիստոսի գերեզմանը այցելեցին արշալոյսէն առաջ եւ եղան մեր Տիրոջ յարութեան առաջին վկաները: «Անոնց հաւատքը եւ Աստուծոյ հանդէպ անոնց վստահութիւնը զիրենք առաջնորդեց վկաները հանդիսանալու Յիսուս Քրիստոսի հրաշափառ յարութեան, որ անկիւնաքարն է մեր հաւատքին եւ մարդկութեան պատմութեան մէջ անկիւնադարձ մը կը կազմէ», ըսաւ Սրբազանը: Ապա ան իր խօսքը ուղղեց Լիւթի հայութեան, ըսելով. «Ոչ ոք պիտի ըսէ որ շատ դժուար էր Լիւթի մէջ ծովս մը հիմնելը: Ես ուրախ եւ հպարտ եմ Հայր Զատիկի եւ զինք շրջապատող հաւատացեալներու վճռակամութեան համար, որոնց կամքն ու հաւատքը հայկական համայնքը ծխական կառոյցով օժտելու ուղղութեամբ իր արդիւնքները տուաւ, հաստատելով Պելճիքայի երկրորդ ծովը», ըսաւ Սրբազանը: Ան հաւատացեալներուն յորդորեց ամէն ճիգ թափել իրենց յաջողութիւնը շարունակելու համար, կազմակերպելով Աստուածաշունչի սերտողութիւն, երիտասարդական ծրագիրներ, երգչախումբի եւ խորանի ծառայողներու փորձեր: Ներկայ էին նաեւ Պրիւսիայի Ծխական Խորհուրդի ատենապետ Պրն. Գրիգոր Պորուեան եւ գանձապահ Պրն. Մինաս Եաղտազ: Երեկոյեան ճաշկերոյթ կազմակերպուած էր ի պատիւ Առաջնորդ Սրբազանին:

ԵՐԻՏԱՍԱՐԴ ՈՒՅՏԱԻՈՐՆԵՐՈՒ ԺՈՂՈՎ



Դէպի Երուսաղէմ ուխտի գացող երիտասարդները Երկուշաբթի 17 Ապրիլին հաւաքուած էին քննարկելու համար 24-29 Մայիս իրենց ուխտագնացութեան մանրամասնութիւնները: Բացման աղօթքէն ետք Օրդ. Լուսինէ Արզումանեան ներկայացուց ուխտագնացութեան ընդհանուր ծրագիրը: Ապա Առաջնորդ Սրբազանը մանրամասն կերպով նկարագրեց ճամբորդութեան գանազան հանգրուանները, ինչպէս՝ օդակայանի գործընթացը, փոխադրութիւնները, պանդոկը եւ խմբային այլ յայտագիրները: Լուսինէն ներկայացուց յայտագրի մանրամասնութիւնները եւ այցելութիւնները գանազան սրբավայրեր, ինչպէս՝ Բեթղէեմ՝ Յիսուսի ծննդավայրը, Նազարէթ՝ ուր մեր Տէրը հասակ առաւ, Գալիլիա՝ գլխաւոր վայրը իր գործունէութեան եւ Երուսաղէմ՝ ուր ան ձերբակալուեցաւ եւ դատաւարտուեցաւ: Խումբը պիտի այցելէ նաեւ հայկական թաղամաս եւ Հայոց Պատրիարքարան: Ծրագրի մանրամասն ներկայացման յաջորդեց հարցում-պատասխանի բաժին մը: Ապա ներկաները հիւրասիրութեան սեղանի շուրջ շարունակեցին խօսակցութիւնները: Շնորհակալութիւն Հայ Եկեղեցոյ Երիտասարդաց Միութեան այս ուխտագնացութեան կազմակերպման համար: Աստուած օրինէ ձեզ:

ՏԻԿՆԱՆՑ ՅԱՆՉՆԱԽՈՒՄԲԻ ՈՒՅՏԱԳՆԱՑՈՒԹԻՒՆԸ ՄԱՐԻԷԹԻ ՍՐԲԱՐԱՆ



Փարիզի Մայր Եկեղեցոյ Տիկնանց Յանձնախումբը իր գործունէութիւնը կը շարունակէ յաջողութեամբ: Անոնք դաստիարակիչ եւ շատ յաջող ուխտագնացութիւն մը կազմակերպեցին դէպի հարաւային Հոլանտա եւ Պելճիքա: Ուխտագնացութիւնը սկսաւ աղօթքով օթոպիսիսի մէջ, որ կը փոխադրէր շուրջ 30 ուխտատուներ Փարիզէն Լիւթ Շաբաթ 29 Ապրիլին: Կիրակի առաւօտ տրամադրուած էր պտտելու Հոլանտայի Մասաթրիխթ քաղաքին մէջ, ուր ուխտատուները այցելեցին Ս. Մերվարտիուսի պատմական Մայր Տաճարը: Սուրբը եղած էր հայ քարոզիչ մը, որ քարոզած էր Մասաթրիխթ քաղաքին մէջ եւ դարձած էր քաղաքի պաշտպան սուրբը: Մասաթրիխթի մէջ խումբը այցելեց հայկական ծխական կեղդոն, ուր հանդիպեցաւ Ծխական Խորհուրդի եւ Տիկնանց Յանձնախումբի անդամներուն: Կիրակի կէսօրէ ետք պատարագ մատուցուեցաւ եւ ապա՝ ընթրիք: Երկուշաբթի օր խումբը այցելեց Ս. Մարիէթի սրբավայրը, ուր Առաջնորդ Սրբազանը միացաւ տեղւոյն կարդինալի կատարած արարողութեան, նուիրուած ուխտագնացութեան ժամանակաշրջանի բացման: Ուխտատուները մասնակցեցան աղօթքին եւ ապա միասնաբար ճաշեցին սրբարանի սեղանատան մէջ: Կէսօրէ ետք անոնք պտտեցան սրբավայրի գանազան բաժինները: Երկուշաբթի իրիկուն խումբը վերադարձաւ Փարիզ: Աստուած ընդունելի ընէ անոնց ուխտը:

ԿԱՐՃ ԼՈՒՐԵՐ...

- Առաջնորդ Սրբազանի կողմէ «Պատարագի սերտողութիւնը էջ առ էջ» ի նիստը յետաձգուած է: Յաջորդ նիստը տեղի պիտի ունենայ Զորեքշաբթի 31 Մայիս ժամը 20-ին «Լուսինան Ֆրէնկեան» սրահին մէջ:
- Աստուածաշունչի հայերէն սերտողութեան հանդիպումը յետաձգուած է: Յաջորդ նիստը տեղի պիտի ունենայ Հինգշաբթի՝ 1 Յունիս ժամը 16:30-ին Մայր Եկեղեցոյ ապակեպատ սրահին մէջ, կազմակերպութեամբ Տիկնանց Յանձնախումբին:
- Առաջնորդ Սրբազան Հօր Կոչը կարդալու եւ արձագանգելու [համար սեղմել այստեղ](#):

